

նորդ հասկցնել կ'ուզէ զիտնական բանասէրը, այդ մասին ո՛չ իր այդ յօդուածին եւ ո՛չ ալ որեւէ այլ տեղ քննադատութեան զիմացոյ փաստի մը չենք հանդիպիր:

Հազա ինչն<sup>ու</sup> զնաց Մինաս Ամթեցին Եւզոսկիա «1663/4ին», կամ անկէ մի քանի տարի առաջ: Կարելոր է զիտնալ, թէ Ամթեցին յիշեալ յիշատակարանը զրոտ է 1664ին, Չեֆուշի մէջ եւ Եւզոսկիա երթալու թուականը յիշուած չէ անոր մէջ: Ուրեմն Ամթեցու Եւզոսկիա երթալու Հ. Ն. Ակինեանի «1663/ին» լոկ ենթադրութիւն մը, եւ անհաւանական ենթադրութիւն մը կը մնայ: Սակայն մեր «ինչն<sup>ու</sup>» հարցման պատասխանը կը դանուի Հ. Ն. Ակինեանի հետեւեալ պարբերութեանց մէջ, զորս զրոտ է իրմէ մէջըրեւած վերոգրեալ տողն առաջ. —

«Մինաս առ ոտս Մարկոս Եպիսկոպոսի (տեղյուր՝ Չեֆուշի եւ Չեֆուշի վանքին մէջ) ուսաւ եւ արժանի եղաւ ստանալ քէ՛ քահանայական ձեռնադրութիւն եւ քէ վարդապետական գաւազան. այս կը պատահի 1655ին, ինչպէս ցոյց կու տայ Մինասի վարդապետական կնիքը (Երուսաղէմ, ք. 453, Պոպարեան ցուցակ Դ., էջ 164)՝:

«Մինաս այս առքիւ գրեց իր ուսուցչին գովքը, երկար տաղաչափականով մը:

«Շէնֆուշի անձուկ շրջանակէն դուրս ելաւ Մինաս 1656ին, գնաց Ուռհա, քարոզեց եւ վերադարձաւ...»:

Չրնդունելով Հ. Ն. Ակինեանի «Շէնֆուշի անձուկ շրջանակէն դուրս ելաւ»ը, կ'ընդունինք եւ կը շեշտենք անոր «գնաց Ուռհա, քարոզեց եւ վերադարձաւ...»ը, որուն մէջն է մեր «ինչն<sup>ու</sup>»ին պատասխանը: Բայց նախ «անձուկ»ը:

Եթէ Չեֆուշի շրջանակը «անձուկ» ըլլար Ամթեցուն համար, ան 1679ին չէր յօժարեր անոր առաջնորդ վանահայրն ըլլալու: Աւելին: Չէր մերժեր Կարինի պէս լայն շրջանակ ունեցող կեղրոնի մը

5. Վերեւ մէջըրեւած երկու տուները կը պատկանին այդ տաղաչափականին, որ 81 տուն է, ինչպէս ըսինք:

առաջնորդութիւնը, զոր «առաջարկած էր իրեն 1685ի Գեկտեմբերին Էջմիածնի Նահապետ կարողիկոսը» (Սալաւանեանց, «Պատմութիւն Երուսաղէմի», աշխարհութարի վերածեց՝ Մետրոպ Եպ. Նշանեան, էջ 645), եւ մինչեւ 1703, այսինքն Երուսաղէմի գահին վրայ հինգ տարի բազմելն էաքն ալ, իր վրայ չէր պահեր Չեֆուշի առաջնորդ-վանահայրի տիրուսը: Երոզութիւնն այն է, որ 1655ին վարդապետական գաւազան ստանալէն յետոյ, 1656էն սկսեալ, Մինաս Ամթեցին հրաւիրուած է եւ Չեֆուշին գացած է ուրիշ քաղաքներ քարոզելու — Ուռհա, Եւզոսկիա եւ ուրիշ տեղեր ալ վատահօրէն — եւ վերադարձած է Չեֆուշ:

Բազմաթիւ փաստեր կան հաստատող, որ Չեֆուշին ժէ. գարուն վարդապետական գաւազան ստացած վարդապետներ (քարոզիչներ) հրաւիրուած են եւ գացած են քարոզելու ո՛չ միայն Ուրֆա, Եւզոսկիա եւ Կարին, այլ մինչեւ Կ. Պոլիս: Արդրնիի Բարձրահայեաց Ս. Աստուածածին վանքին մէջ Գարեղին վրդ. Սրուանձտեանի ցուցակագրած թիւ 4 Յայտատուրքի պատմադրութիւնը կ'ըսէ՝ Չեֆուշի վանքն վարդապետական գաւազան ստացած՝ Եղիազար հոռմկլայեցի վարդապետին համար — «Եւ սա շատ քաղաքներ եւ տեղեր շրջեցաւ, մինչեւ որ իր վարդապետելու (քարոզելու) համար տարածուեցաւ ամենայն երկիր եւ մեծ անուն ու փառք ստացաւ» (Անդ, էջ 400): Ինչպէս Եղիազարը, նմանապէս Չեֆուշն վարդապետական գաւազան ստացած Արիստակէս Խարբերպցի վարդապետը (որ Կ. Պոլսոյ մէջ վարդապետարան ալ հիմնած է, աշակերտներ հասցուցած է (Հանդէս Ամսօրեայ, 1960, ք. 7-9) եւ Խաչատուր Ատիշցին Կ. Պոլիս հրաւիրուած են քարոզելու: Ուրեմն, որոչ է, թէ 1664էն առաջ Մինաս Ամթեցին Եւզոսկիա հրաւիրուած է քարոզելու եւ այդ հանդամանքը, ինչպէս պիտի տեսնենք քիչ ետք, իրեն համար եղած է նաեւ կարելոր հանգրրուան մը:

Շարունակենք մատնանշել Հ. Ն. Ակի-